ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2646-19 գրությամբ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.02.2019թ. թիվ ԴՎԱ/557 գրության հիման վրա, 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2646-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/43 ընթացակարգի շրջանակներում 25.02.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.02.2019թ. թիվ ԴՎԱ/557 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ի միջև 18.09.2018թ. կնքված «ԲՄԱՊՁԲ-4/9-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.02.2019թ. միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 4-րդ չափաբաժնի «բլոկավորման երկժանի 10 հատ» որից 2-ը չի մատակարարել, 15-րդ չափաբաժնի «հետին լապտեր 200 հատ»՝ չի մատակարարվել, 17-րդ չափաբաժնի «գեներատոր 30 հատ»՝ չի մատակարարվել, 27-րդ չափաբաժին «օդի էլեկտրոմագնիսական փական (ագրեգատորների կառավարման) 20 հատ»՝ չի մատակարարվել, 28-րդ չափաբաժնի «վառոցքի բաշխիչ առանց հպակի 40 հատ»՝ չի մատակարարվել, 31-րդ չափաբաժնի «թերմոստատ 100 հատ»՝ չի մատակարարվել, 33-րդ չափաբաժնի «դիմապակի 10 հատ» որից 3-ը չի մատակարարվել, 41-րդ չափաբաժնի «ռադիատորի ծորակ 200 հատ»՝ չի մատակարարվել, 44-րդ չափաբաժնի «կոմպրեսոր հավաքական 20 հատ»՝ չի մատակարարվել ընդհանուր 3 247 550 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 08.02.2019թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/43 ընթացակարգի շրջանակներում 25.02.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ի միջև 18.09.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-4/9-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ին ուղղված 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/515 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն 07.02.2019թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2646-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.02.2019թ. թիվ ԴՎԱ/557 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ի միջև 18.09.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-4/9-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել մի շարք ապրանքներ, այդ թվում նաև հետևյալ ապրանքները.

Չափաբաժնի համար	Ապրանքի անվանում	քանակ
4	Բլոկավորման երկժանի	10 հատ
15	Հետին լապտեր	200 հատ
17	Գեներատոր	30 հատ
27	Օդի էլեկտրոմագնիսական փական (ագրեգատների կառավարման)	20 հատ
28	Վառոցքի բաշխիչ առանց հպակի	40 հատ
31	Թերմոստատ	100 հատ
33	Դիմապակի	10 հատ
41	Ռադիատորի ծորակ	200 հատ

44	Կոմպրեսոր հավաքական	20 հատ

Համաձայն ՀՀ ՊՆ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության պետի կողմից հաստատված Պայմանագրի կատարման վերաբերյալ բացասական եզրակացության «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ն 18.09.2018թ. կնքված «ԲՄԱՊԶԲ-4/9-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 15 օր ժամկետի խախտումով չի մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրի 4-րդ և 33-րդ չափաբաժինների մասով՝ 2 հատ բլոկավորման երկժանի և 3 հատ դիմապակի, 200 հատ հետին լապտեր, 30 հատ գեներատոր, 20 հատ օդի էլեկտրոմագնիսական փական (ագրեգատների կառավարման), 40 հատ վառոցքի բաշխիչ առանց հպակի, 100 հատ թերմոստատ, 200 հատ ռադիատորի ծորակ, 20 հատ կոմպրեսոր հավաքական:

«Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ին ուղղված 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/515 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրի համաձայն պարտավորվել էր 2018թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել վերոհիշյալ ապրանքները՝ 3 247 550 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, որոնք սակայն չեն մատակարարվել:

Նույն գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի վերոհիշյալ ապրանքների մասով 07.02.2019թ. լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ Պայմանագրի համաձայն «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 10.12.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել համապատասխան քանակի մի շարք ապրանքներ:

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:***

Արձանագրում եմ, որ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում:

Գտնում եմ, որ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.02.2019թ. թիվ 01.1/26-3/2646-19 գրությամբ «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վ և Ն Մուրադյաններ» ՍՊԸ-ին ընդգրկել

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**